ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2011թ. ապրիլի 15 -ի թիվ 13/2

ԱՆԿԱԽ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջով, ՀՀ վերահսկիչ պալատի 2010 թվականի ֆինանսական գործունեությունը աուդիտի ենթարկելու նպատակով, ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

ՀՀ վերահսկիչ պալատի 2010 թվականի ֆինանսական գործունեությունը աուդիտի ենթարկելո ւ համար ընտրել «Ամերիա Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերությանը:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Հ. ՁԱՔԱՐՅԱՆ

«Ամերիա Աուդիտ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0019,
Բաղրամյան պող. 6
Հեռ.՝ (374 10) 52 40 40
Ֆաքս՝ (374 10) 54 68 00
Էլ.փոստ՝ameria@ameria.am

Գաղտնի

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատ

ՆԱՄԱԿ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Վերահսկիչ պալատի ֆինանսական գործունեության աուդիտի վերաբերյալ

01.01.09 – 31.12.09թթ. ժամանակաշրջանի համար

Երևան-2010

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի ղեկավարությանը

Հարգելի տիկնայք և պարոնայք,

Մենք ավարտեցինք Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի (այսուհետ՝ Վերահսկիչ պալատ) 01.01.09թ.-31.12.09թ. ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների, այդ թվում՝ Ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշիռների, ինչպես նաև Հաշվետու ժամանակաշրջա նում N 01 01 01 02 «Վերահսկիչ պալատի պահպանում», N 01 01 01 12 «ՀՀ վերահսկիչ պալատի կարողությունների զարգացում», N11 01 01 01 «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ», N 01 01 03 04 «Արտաբյուջետային ոլորտություններ» և N 01 01 01 10 «Վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդ» Ծրագրերի Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին կազմված հաշվետվությունների աուդիտը, որի արդյունքում տրվեց դրական եզրակացություն:

Աշխատանքները կատարելիս մեր կողմից հաշվի է առնվել ՀՀ կառավարության 21.04.2005թ. N 509-Ն «Աուդիտի ստանդարտները հաստատելու մասին» որոշմամբ հաստատված ՀՀ աուդիտի ստանդարտների և այլ օրենսդրական ակտերի պահանջները: Աուդիտի ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:
Աուդիտի անցկացման ընթացքում ի հայտ են եկել Վերահսկիչ պալատի գործունեության և կատարած աշխատանքին վերաբերող որոշ թերություններ, որոնք մեր կարծիքով արժանի են Վերահսկիչ պալատի ղեկավարության ուշադրությանը: Դրանց քննարկումը ամբողջական դիտարկումներով և առաջարկություններով կցվում է սույն նամակին:

Աուդիտն անցկացվեց բարենպաստ աշխատանքային պայմաններում: Աշխատանքների հաջող անցկացմանը նպաստեց Վերահսկիչ պալատի ղեկավարության և պատասխանատու այլ աշխատակիցների հետ մեր սերտ համագործակցությունը: Աուդիտի անցկացման ընթացքում մեզ տրամադրվեցին Վերահսկիչ պալատի հաշվետու ժամանակաշրջանի համար կազմված ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական փաստաթղթեր և անհրաժեշտ այլ տեղեկատվություն, որոնց շնորհիվ ժամանակին ավարտվել են աուդիտի աշխատանքները, ինչի համար մեր գոհունակությունն ենք հայտնում Վերահսկիչ պալատի ղեկավարությանը:

«Ամերիա Աուդիտ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն — Ա. Անդրեասյան

Աուդիտոր — Վ. Խաչիբաբյան

21 ապրիլի, 2010թ.

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի ղեկավարությանը

Հարգելի տիկնայք և պարոնայք,

Մենք ավարտեցինք Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի (այսուհետ՝ Վերահսկիչ պալատ) 01.01.09թ.-31.12.09թ. ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների, այդ թվում՝ Ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշիռների, ինչպես նաև Հաշվետու ժամանակաշրջա նում N 01 01 01 02 «Վերահսկիչ պալատի պահպանում», N 01 01 01 12 «ՀՀ վերահսկիչ պալատի կարողությունների զարգացում», N11 01 01 01 «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ», N 01 01 03 04 «Արտաբյուջետային ոլորտություններ» և N 01 01 01 10 «Վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդ» Ծրագրերի Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին կազմված հաշվետվությունների աուդիտը, որի արդյունքում տրվեց դրական եզրակացություն:

Աշխատանքները կատարելիս մեր կողմից հաշվի է առնվել ՀՀ կառավարության 21.04.2005թ. N 509-Ն «Աուդիտի ստանդարտները հաստատելու մասին» որոշմամբ հաստատված ՀՀ աուդիտի ստանդարտների և այլ օրենսդրական ակտերի պահանջները: Աուդիտի ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:
Աուդիտի անցկացման ընթացքում ի հայտ են եկել Վերահսկիչ պալատի գործունեության և կատարած աշխատանքին վերաբերող որոշ թերություններ, որոնք մեր կարծիքով արժանի են Վերահսկիչ պալատի ղեկավարության ուշադրությանը: Դրանց քննարկումը ամբողջական դիտարկումներով և առաջարկություններով կցվում է սույն նամակին:

Աուդիտն անցկացվեց բարենպաստ աշխատանքային պայմաններում: Աշխատանքների հաջող անցկացմանը նպաստեց Վերահսկիչ պալատի ղեկավարության և պատասխանատու այլ աշխատակիցների հետ մեր սերտ համագործակցությունը: Աուդիտի անցկացման ընթացքում մեզ տրամադրվեցին Վերահսկիչ պալատի հաշվետու ժամանակաշրջանի համար կազմված ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական փաստաթղթեր և անհրաժեշտ այլ տեղեկատվություն, որոնց շնորհիվ ժամանակին ավարտվել են աուդիտի աշխատանքները, ինչի համար մեր գոհունակությունն ենք հայտնում Վերահսկիչ պալատի ղեկավարությանը:

«Ամերիա Աուդիտ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն — Ա. Անդրեասյան

Աուդիտոր — Վ. Խաչիբաբյան

21 ապրիլի, 2010թ.

1. Հաշվապահական հաշվառման և հաշվետվական համակարգ

Հաշվապահական հաշվառումը վարվել է Բյուջետային կազմակերպությունների համար ՀՀ կառավարության կողմից նախատեսված հաշվային պլանով: Հաշվապահության կողմից կազմվել են Ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշիռները՝ 01.01.09-31.12.09թթ. ժամանակահատվածի համար, ինչպես նաև N 01 01 01 02 «Վերահսկիչ պալատի պահպանում», N 01 01 01 12 «ՀՀ վերահսկիչ պալատի կարողությունների զարգացում», N11 01 01 01 «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ», N 01 01 03 04 «Արտասահմանյան ուղևորություններ» և N 01 01 01 10 «Վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդ» Ծրագրերի Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին կազմած հաշվետվությունները:

Բոլոր ծախսումները հաստատված են Վերահսկիչ պալատի ղեկավարության կողմից: Պատշաճ կերպով է կազմակերպվել հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (սկզբնական հաշվառման փաստաթղթեր, գրանցամատյաններ, ֆինանսական հաշվետվություններ և այլն) պահպանությունը՝ հաշվետու ժամանակաշրջանի առանձին ամիսների համար:
Հաշվապահական հաշվառումը դեռևս ամբողջությամբ չի վարվում համակարգչային ծրագրով:

2. Ներքին վերահսկողության համակարգի գնահատում

Կազմակերպությունում գործում են հետևյալ ներքին վերահսկողական գործառույթները.

- ղեկավարությունը իրականացնում է ընդհանուր հսկողություն Վերահսկիչ պալատի ֆինանսական գործունեության նկատմամբ,
- բանկային փոխանցումները (վճարման հանձնարարագրերը) կազմվում են ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի կողմից, հաստատվում՝ ղեկավարի կողմից,
- սկզբնական փաստաթղթերը համարակալվում են, լրացվում են պահանջվող վավերապայմանները,
- կազմված ֆինանսական հաշվետվությունները հաստատվում են Վերահսկիչ պալատի ղեկավարության կողմից,
- գումարների փոխանցումները հաստատվել են սահմանված կարգով:

Վերահսկողության ներկա համակարգը բավարար է փաստացի ծախսումները նախահաշվի հետ պարբերաբար համեմատելու (վերահսկելու) համար և հուսալի է՝ փաստաթղթերի վավերացման ու վերահսկողության, պարտականությունների տարանջատման և ստուգիչ հաշվարկների կատարման նպատակով: Նշված իրականացվող գործընթացները էական ազդեցություն են ունենում Ծրագրերի հաջող իրականացման վրա և իջեցնում չկատարման ռիսկայնությունը:

3. Այլ Ընթացակարգեր

ա. Գնումներ

Վերահսկիչ պալատի համար անհրաժեշտ ապրանքանյութական արժեքների գնումները հիմնականում իրականացվել է «Գնումների պետական գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջնորդությամբ՝ կնքելով համապատասխան պայմանագրեր: Գնումների կազմակերպումը, դրանց դիմաց կատարված վճարումներն իրականացվում են հետևյալ ընթացակարգերով.
Գնումների գործակալությանը յուրաքանչյուր պահանջվող նյութական արժեքների քանակության վերաբերյալ Վերահսկիչ պալատի կողմից ներկայացվում է գնումների հայտ և ժամանակացույց: Վերջինիս կողմից Վերահսկիչ պալատ է ներկայացվում պահանջվող ապրանքանյութական արժեքներն վաճառող կազմակերպության հետ Գնումների պետական

գործակալության կնքված պայմանագիրը կամ համաձայնագիրը և դրանց դիմաց վճարման ժամանակացույց:
Գնված ապրանքանյութական արժեքների վճարման համար Վերահսկիչ պալատի կողմից ՀՀ Ֆինանսների նախարարության գանձապետական բաժանմունք է ներկայացվում համապատասխան հավաստագիր և հայտ, որից հետո բանկային փոխանցումներով կատարվում են համապատասխան վճարումները:

բ. Անձնակազմ և աշխատանքի վարձատրություն

Վերահսկիչ պալատի յուրաքանչյուր աշխատողի իրավունքները և պարտականությունները հստակ և մանրամասն կերպով նախատեսվում են վերջինիս հետ կնքվող աշխատանքային պայմանագրում: Աշխատանքային պայմանագրերը հիմնականում կազմված են «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: ՀՀ կառավարության 16.06.06թ. N 875-Ն որոշմամբ հաստատված «Աշխատանքային պայմանագրի գրանցման, գրանցամատյանի վարման ու պահպանման» կարգի համաձայն Անձնակազմի կառավարման բաժնում սահմանված կարգով վարվում է Պայմանագրերի հաշվառման գրանցամատյան:
Աշխատողների հաճախելիությունը հաշվառվել է ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի N1471-Ն «Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի վարման կարգը և ձևը սահմանելու» մասին որոշմամբ հաստատված կարգի համաձայն:
Վերահսկիչ պալատի խորհրդի անդամների աշխատավարձերը հաշվարկվել են՝ հիմք ընդունելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 10-րդ կետով նախատեսված դրույքաչափերի և համապատասխան գործակցի արտադրյալները , իսկ մնացած աշխատողների աշխատավարձի հաշվարկումը և վճարումը կատարվել են է կնքված աշխատանքային պայմանագրերին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Գ. Գործուղումներ

Աշխատողները գործուղվում են Վերահսկիչ պալատի ղեկավարի հրամանների համաձայն: Գործուղվող յուրաքանչյուր աշխատողի համար կազմվում է գործուղման թերթիկ, որտեղ նշվում են գործուղվող անձի տվյալները, գործուղման ժամկետները, վայրը, նպատակը, մեկնման և ժամանման ամսաթվերը և այլն:
Գործուղման ծախսերը հիմնավորված են կից ծախսերը հաստատող սկզբնական հաշվառման փաստաթղթերով: Առկա են Վերահսկիչ պալատից գործուղում մեկնողների համար պահանջվող համապատասխան փաստաթղթերը (հրամաններ, գործուղումը հաստատող սահմանված կարգով լրացված վկայականները և այլն): Գործուղման գումարները հաշվարկվել են հաշվի առնելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դրույքաչափերը:

4. Նախորդ հաշվետու ժամանակաշրջանին վերաբերվող նամակ ղեկավարության առաջարկությունների իրականացում

1.Դիտարկում

Տարածքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքը պետական գրանցում չի ստացել:

Առաջարկություն
Առաջարկվում է տարածքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները գրանցել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Իրականացում

Իրականացվել է:

2.Դիտարկում
ՀՀ տարածքից դուրս կատարված գործուղումների արտարժույթով արտահայտված ծախսերը առանձին դեպքերում չեն հաշվարկվել ՀՀ կառավարության 29.12.05թ. Ն 2335-Ն որոշմամբ հաստատված «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման» կարգի 19-րդ կետի պահանջների համապատասխան:

Առաջարկություն
Առաջարկվում է ՀՀ տարածքից դուրս կատարված գործուղումների արտարժույթով (ԱՄՆ դոլարով կամ եվրոյով) արտահայտված ծախսերը հաշվարկել, փոխանակումը հաստատող փաստաթղթի բացակայության դեպքում, ՀՀ կետրոնական բանկի կողմից սահմանված վերջնահաշվարկի կատարման օրվա (գործուղման ծախսերի մասին հաշվետվությունը ներկայացնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում) ԱՄՆ դոլարի կամ եվրոյի վաճառքի փոխարժեքով համաձայն ՀՀ կառավարության թիվ 2335-Ն առ 29.12.2005թ. որոշմամբ հաստատված կարգի:

Իրականացում

Իրականացվել է:

3.Դիտարկում

Վերջնահաշվարկ կատարելիս ֆիզիկական անձանցից հաշվարկվել և պետական բյուջե են փոխանցվել պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ, որը հակասում է ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 30 մայիսի 2005 թ. N 1-05/05-Ն հրամանով հաստատված «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի 33 կետի պահանջին:

Առաջարկություն

Առաջարկվում է վերջնահաշվարկներ կատարելիս պետական բյուջե հասանելիք վճարները հաշվարկել՝ ղեկավարվելով «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման և վճարման կարգի մասին» հաստատված հրահանգի պահանջներով:

Իրականացում

Իրականացվել է:

5. Հաշվետու ժամանակաշրջանի դիտարկումներ և առաջարկություններ

1. Դիտարկում

Հաշվետու ժամանակաշրջանի համար Ծրագրերի Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին կազմված հաշվետվություններում հաստատված նախահաշվի փոխարեն (661362,9 հազ.դրամ) արտացոլվել է նախկինում հաստատված նախահաշվի տվյալները (692650,9 հազ.դրամ):

Հետևանք

Հաշվետու ժամանակաշրջանի հաստատված նախահաշվի նկատմամբ կատարողականը ճիշտ չի արտացոլվի:

Առաջարկություն

Կազմված հաշվետվություններում արտացոլել միայն վերջնական հաստատված նախահաշվի ցուցանիշները:

«Ամերիա Աուդիտ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0019,
Բաղրամյան պող. 6
Հեռ.՝ (374 10) 52 40 40
Ֆաքս՝ (374 10) 54 68 00
Էլ.փոստ՝ ameria@ameria.am

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի
ղեկավարությանը

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի (այսուհետ՝ Վերահսկիչ պալատ) 01.01.09թ.-31.12.09թ. ժամանակաշրջանի (այսուհետ՝ Հաշվետու ժամանակաշրջան) ֆինանսական գործունեությունը, այդ թվում՝ 31.12.09թթ. դրությամբ Ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշիռները, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում N 01 01 01 02 «Վերահսկիչ պալատի պահպանում», N 01 01 01 12 «ՀՀ վերահսկիչ պալատի կարողությունների զարգացում», N11 01 01 01 «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ», N 01 01 03 04 «Արտաքսահանման ուղևորություններ» և N 01 01 01 10 «Վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդ» ծրագրերի Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին կազմված հաշվետվությունները:
Վերահսկիչ պալատի ֆինանսական գործունեության և վերը նշված հաշվեկշիռների ու հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Վերահսկիչ պալատի ղեկավարությունը:
Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք Վերահսկիչ պալատի հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական գործունեության վերաբերյալ:
Մենք աուդիտն անցկացրեցինք ՀՀ աուդիտի ստանդարտներին համապատասխան:
Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ կազմված հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը՝ թեսթային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, Վերահսկիչ պալատի ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և հաշվետվությունների ներկայացման գնահատումը:
Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով, առ 31-ը դեկտեմբերի 2009թ. դրությամբ Ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշիռները, Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվությունները, Հաշվետու ժամանակաշրջանում Վերահսկիչ պալատի ֆինանսական գործունեության և ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարների ծախսերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված բյուջետային հիմնարկների համար նախատեսված հաշվապահական հաշվառման կարգման պահանջների:

«Ամերիա Աուդիտ» ՓԲԸ

Գործադիր տնօրեն Ա. Անդրեասյան

Աուդիտոր Վ. Խաչիբաբյան

Երևան, 21 ապրիլի 2010թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ

2010 թվականի մայիսի 10-ի թիվ 13/7

«ԱՄԵՐԻԱ ԱՈՒԴԻՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ վերահսկիչ պալատի 2010թ. թիվ 11/5 որոշման համաձայն «Ամերիա Աուդիտ» ՓԲԸ կողմից աուդիտի է ենթարկվել ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմի 2009թ. ֆինանսական գործունեությունը:

Աուդիտի արդյունքների վերաբերյալ ընկերության կողմից ներկայացված «Ֆինանսական հաշվետվությունը» և «Նամակ ղեկավարությանը» նյութերն ուսումնասիրելուց և քննարկելուց հետո ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե.

1. «Ամերիա Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ վերահսկիչ պալատի Աշխատակազմում իրականացված աուդիտի արդյունքների մասին աուդիտորական եզրակացությունն ընդունել ի գիտություն:
2. Հիմք ընդունելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում ամրագրված հրապարակայնության սկզբունքը՝ այն տեղադրել ՀՀ վերահսկիչ պալատի ինտերնետային կայք էջում:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Ի. ՋԱՔԱՐՅԱՆ